1. Ժամ աղոթքի, ժամ աղոթքի,
Աստծուց ես տրված կյանքում,
Պայքարի մեջ այս վատ կյանքից
Դու ինձ վեր ես բարձրացնում:
Մութ գիշերին չեմ քնում
Եվ ծնկի եմ ես իջնում,
Ու հոգով Աստծո հետ եմ խոսում.
«Օ, իմ երկնային Փրկիչ,
Քո հզոր ձեռքը մեկնիր,
Օգնիր ինձ, ուժասպառ եմ լինում»:

2. Դրսում փչում է խիստ քամին,
Սպառնում է սառցով, ձնով,
Եվ այդպիսի մի փոթորիկ
Հաճախ է տիրում սրտիս:
Այդ ժամին պարզ տեսնում եմ
Իմ ոչնչությունը ես,
Կոտրված խնդրում եմ Հիսուսին.
«Օ, իմ Աստվա՛ծ, գիտես Դու՝
Ի՜նչ մեծ վիշտ կա իմ հոգում,
Ազատի՛ր ինձ այս մեծ տանջանքից»:

3. Աստվա՛ծ իմ, ես այս երկրի վրա
Անհոգ ապրել չեմ ուզում,
Թեկուզ միշտ լինի փոթորիկ
Կյանքիս գալիք օրերում:
Միայն խնդրում եմ մի բան՝
Միշտ ներկայությունդ զգամ
Եվ Քո ձեռքը՝ միշտ մեկնած դեպ ինձ,
Իմ առջևից Դու քայլի՛ր,
Ինձ Քո սիրո մեջ պահի՛ր,
Պատերազմում հաղթություն տուր ինձ:

4. Օ, աղոթք փառաբանության,
Գոհությունից այրվում եմ,
Ինձ լցնում ես ուրախությամբ,
Քեզանով ես ապրում եմ:
Երբ փոթորիկների մեջ
Ծփոթված ընկնում եմ ես,
Իմ Աստծուն եմ ես աղաղակում:
Աղոթքս լսում է Նա
Եվ ինձ լցնում գոհությամբ,
Աղոթքով նոր կյանք եմ ստանում: